



# Ազգաբարոյեան Trumpet's Sound **Վոդ**

51-րդ ՏԱՐԻ, ԱՄՏՐԱԼԻԱ  
ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2020



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»  
երկամսյա հոգեւոր բերք

Պատասխանատու խմբագիր՝  
հովիւ Հրայ Գուլյունեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



## Բովանդակություն

Արդեօք միևնույն վերջ լեցուա՞ծ եք. . . . .	3
<i>Հովիւ Հրայ Գուլյունեան</i>	
Սաղմոս 6. . . . .	4
<i>Տոն Սրբոմբր</i>	
Ազատարար ձեռքը . . . . .	7
<i>Քաղուած</i>	
Փորձութիւնները մեր կեանքին մէջ . . . . .	9
<i>Ռէքս Տիրլալ</i>	
Ապաշխարութիւն. . . . .	11
<i>Նէյլ Պուրման</i>	
Աշխատանքը դաշտին մէջ . . . . .	15
<i>ԱՍՄ</i>	

Կազմի նկարը՝ «ԱՍՄ» կամատրոնները սնունդ  
բաժնելու ժամանակ, 2106թ.:

## Փառարանություն / աղօթք

- Տերօջը շնորհակալութիւն կը յայտնենք Իր բարութեան համար:
- Կը խնդրենք աղօթել մեր աշխատակիցներու՝ Մարտունի, Անժէլայի, Անիի, Յայկուհիի, Աշոտի, Յասմիկի եւ անոնց զաւակներու անվտանգութեան եւ իմաստութեան համար:
- Աղօթեցէք Լիբանանի մեր հայրենակիցներուն աջակցութեան մեր նոր ծրագրի համար:
- Աղօթեցէք «Zoom» ծրագրով սերտողութիւններու եւ Յայաստանի մէջ Աստուածաշունչի ամէնօրեայ խորհրդածութիւններու համար:
- Աղօթեցէք Կրետայի եւ իր ոտքի անդամահատուած մատներու ապաքինման համար:
- Աղօթեցէք Կայանէի համար, կրկնակի կաթուածի պատճառով անդամալոյծ դարձած է: Իր կոյր ամուսինը տունը միայնակ է:

## Արդեօք մինչեւ վերջ լեցուած էք

**Մ**իտնիյի 2000 թ.-ի Ռդիմպիական խաղերու բացման արարողութեան ընթացքին աշխարհը կը հետեւէր Ռդիմպիական կրակին, սակայն պատմական այդ պահը մօտ էր նուաստացուցիչ ձախողութիւն դառնալու: Սուրբ կրակը, որը բերուած էր Յունաստանի Ռդիմպիայէն շուտով մարելու էր, մինչ աւելի քան երկու միլիարդ մարդ կը հետեւէր այդ իրադարձութեանը:

Արարողութեան նախօրէին գաղտնի փորձեր կ'ընթանային՝ համոզուելու համար, որ ներկայացումն առանց խոչընդոտի պիտի ընթանար:

Աւագ դեկավարներէն մէկը ըսաւ.

- Կազի շիշերը պէտք է մինչեւ բերան լիցքաւորէք:

Կազի համար պատասխանատու տղաները ըսին.

- Օ՛հ, մէկ տոննա կազ կայ:

Բայց դեկավարը ըսաւ.

- Մինչեւ վերջ լեցուցէք, ռիսքի մի՛ դիմէք, բերնէ բերան լեցուցէք:

Սակայն բացման արարողութեան յաջորդ օրը կազի շիշերու ստուգումը ջուրի երես հանեց կազմակերպիչներու անփութութիւնը: Անոնք միջազգային խայտառակութեան առարկայ դարձան: Շիշերը ամբողջովին դատարկ էին:

Մատթ. 25:1-13-ը կը խօսի հինգ կոյսերու մասին, որոնց իւրը վերջացաւ: Հարցս հետեւեալն է. «Ինչպէ՞ս է ձեր հոգեւոր կեանքը: Արդեօք հատնելու վրա՞յ էք, թէ՞ մինչեւ վերջ լեցուած էք»:

Համաճարակով պայմանաւորուած նոր կենսաձեւը կրնայ մեզ անակնկալներ մատուցել՝ վախ, անորոշութիւն, գործազրկութիւն, տեղ քայլ, պարապութիւն: Արդեօք հինգ կոյսերու պէս հոգեւորապէս քունի՞ պիտի անցնինք ու պատրաստ չգտնուի՞նք Տէրոջը դիմաւորելու:

**Աստուծոյ Խօսքը կը քաջալերէ մեզ:**

«Արթուն կեցէք, հսկեցէք, վասն զի ձեր հակառակորդը, սատանան՝

մռնչող առիծի պես կը պտըտի ու կը փնտռե՝ թե ո՛վ կլլէ» (Ա Պետ. 5:8):

«Ձգո՛յ՛ջ կեցեք, արթո՛ւն մնացեք եւ աղօթք ըրեք, վասն զի չեք գիտեր  
ատենը ե՞րբ է» (Մարկ. 13:33):

«Ձեր մտքերը գօտեպնդեցե՛ք՝ արթուն կեցած՝ կատարելապես յու-  
սացեք այն շնորհքին որ ձեզի պիտի տրուի Յիսուս Քրիստոսին յայտ-  
նուելու ատենը» (Ա Պետ. 1:13):

### **Արդեօք մինչեւ վերջ լեցուա՞ծ էք:**

Մենք պետք է զգօն ըլլանք աղօթքի մէջ, Խօսքը կարդալու մէջ, խոր-  
հրդածելու մէջ, մեր միտքը չարէն հեռու պահելու մէջ, իրարու համար  
աղօթելու եւ զիրար քաջալերելու մէջ, քանի որ շատ շուտով Թագաւո-  
րին պիտի տեսնենք:

Միայն քու փրկութեամբդ մի՛ բաւարարուիր: Քու շրջապատիդ մէջ  
շատերը կան, ովքեր Աւետարանի կարիքն ունին: Վե՛ր կաց եւ ջանա-  
սե՛ր եղիր Տէրոջը ծառայելու մէջ, Աւետարանի բարի լուրը տարածե՛:

Հ. Գ.

## **Սաղմոս 6**

### **Կարդացե՛ք 6-րդ Սաղմոսը**

**Ի**նչ որ պատճառով վաղ եկեղեցին 6-րդ, 32-րդ, 38-րդ, 51-րդ, 102-րդ,  
130-րդ եւ 143-րդ Սաղմոսները անուանել է «զղջման Սաղմոսներ»:  
Այնուամենայնիւ, այս սաղմոսներէն առաջինը մեղքի խոստովանու-  
թիւն կամ ներման աղօթք չի պարունակէր: Սա իսկապէս այն մարդու  
աղօթքն է, ով կը գիտակցի իր տկարութիւնն ու սահմանափակումնե-  
րը ու փրկութեան համար Տէրոջը կը դիմէ: Տէրը կը պարգեւատրէ զինք՝  
լսելով ու պատասխանելով իր աղօթքին:

Սաղմոսի առաջին մասը (1-7 համարներ) աղօթք է բժշկութեան ու  
փրկութեան համար, իսկ երկրորդ մասը (8-10 համարներ) կ'արտայայ-  
տէ Դաւիթի վստահութիւնը, որ Աստուած պիտի պատասխանէ իր ա-  
ղօթքը:

Սաղմոսը կը սկսի խնդրանքով, որ Տէրն Իր սրտմտութեամբ չյանդիմանէ ու Իր բարկութեամբ չխրատէ զինք: Գաւիթը կը գիտակցէր, որ եթէ Աստուած իրականացնէ Իր դատաստանը, ապա ոչ մէկ խնդրանք չէր կարող մեղմացնել իր արժանի պատիժը: Ուստի կը դիմէ Աստուծոյ՝ Իր ողորմութեան հիման վրայ: Ան կը խնդրէ Տէրոջ բժշկութիւնը:

Մենք չենք գիտեր, թէ սաղմոսերգիչն ինչպիսի խնդիրներ ունէր: Նախորդ Սաղմոսի մէջ ան մտահոգուած էր իրեն շրջապատող չար մարդկանց անօրէնութիւններով: 8-րդ համարէն կրնանք հասկնալ, որ ան անհանգստացած էր անօրէնութիւն գործողներու պատճառով, սակայն այս Սաղմոսի մէջ նման շեշտադրութեան չենք հանդիպիր:

Շատ առումներով լաւ է սաղմոսերգիչի խնդիրներու մասին անտեղեակ ըլլալը, քանի որ սա հնարատրութիւն կուտայ մեզ ճշմարտութիւնը մեր յատուկ իրավիճակներուն մէջ կիրառելու համար: Ինչպիսիւն ըլլան մեր հանգամանքները կամ դժուարութիւնները մենք կարող ենք աղօթքով Տէրոջ առջեւ գալ ու փնտռել Իր ողորմութիւնը:

Չնայած որ սաղմոսերգիչը Տէրոջը կը դիմէ, սակայն կրնանք նկատել անոր մօտ հրատապութեան զգացումը: Ան կը հարցնէ, թէ որքա՞ն պէտք է սպասէ, որ իրեն հասնի Տէրոջ օգնութիւնը: Այնուամենայնիւ մենք պէտք է Տէրոջը համբերատար սպասենք: Սա է Սաղմոս 37:7-ի պատգամը. «Տէրոջը համբերէ ու Անոր սպասէ, եւ մի՛ նեղանար իր ճամբան յաջողութեամբ գացողին համար»: Գուցէ լաւ հիմքեր կան, թէ ինչու Տէրը կ'ուզէ, որ Իրեն սպասենք: Համենայն դէպս, այդպէս ընելով մեր վստահութիւնն ու հաւատքը առ Աստուած աւելի կը զօրանայ:

Սաղմոսերգիչը Տէրոջը կը դիմէ փրկութեան համար: Սա անհրաժեշտութիւն է այս կեանքին մէջ, քանի որ գերեզմանին մէջ Տէրոջը յիշատակել չկայ: Ատոր մասին մտածելով կը գիտակցինք, որ մեր խընդրանքները ոչ միայն պէտք է բաւարարուին այս կեանքին մէջ, այլ պէտք է շնորհակալութիւն յայտնենք Աստծոյ Իր բոլոր բարութեան համար՝ նախքան գերեզման մտնելը: Արդե՞օք շնորհակալ ենք Տէրոջը՝ Իր անսահման սիրոյն համար:

Որոշ առումով կարող ենք ենթադրել սաղմոսերգիչի դիմագրուած դժուարութիւններու ծաւալը: Իր դժուարութիւնը յոգնեցուց զինք հոգեւորապէս եւ զգայապէս: Իր Թշնամիներու գործունէութիւնը վաղաժամ

ծերացուց զինք: Մենք կը պատկերենք խորը վիատութեան մէջ ընկած մարդու մը: Բայց ան ճիշտ վարուած էր: Ան իր բոլոր խնդիրները Տէրոջ առջեւ բերած էր եւ իր սրտի ծանրութիւնը Անոր առջեւ թափած էր:

Սաղմոսերգիչը կը գիտակցի, որ Տէրը լսած է իր լացն ու աղաղակը: Լաւ է այս ճշմարտութիւնը հասկնալը: Տէրը կը լսէ մեզ, երբ Իր անունը կը կանչենք: Սաղմոսերգիչը կատարեց միակ իմաստուն քայլը. ան աղօթքով դիմեց Տէրոջը եւ բոլոր մանրամասնութիւնները Իրեն ներկայացուց:

Յաւօք սրտի մեր մէջ թաքնուած է այն համոզմունքը, որ ունակ ենք մեր ուժերով կարգաւորել մեր սեփական խնդիրները: Նաեւ կը խորհինք, թէ մասնագէտներուն դիմելով կրնանք մեզ անհրաժեշտ օգնութիւն ստանալ: Ի հարկէ կան պարագաներ, երբ լաւ է մեր խնդիրներու մասին իմաստուն քրիստոնեայ խորհրդատուի հետ խօսիլ, բայց նախ եւ առաջ մենք պէտք է Տէրոջ օգնութիւնը փնտռենք:

Իր նորոգուած ուժով սաղմոսերգիչը անօրէնութիւն գործողներուն կը պատուիրէ հեռանալ իրմէ: Ան սորվեցաւ Տէրոջը վատահիլ եւ այժմ իրեն հակառակողներու ճակատագիրը յանձնեց Տէրոջ ձեռքերուն մէջ:

Մենք բոլորս դժուարութիւններ ունինք: Եկէք չփորձենք մեր սեփական ուժերով լուծել մեր խնդիրները: Աղօթքով Տէրոջը դիմենք, պատմենք Անոր մեր կարիքները, չնայած որ Ան արդէն գիտէ, եւ փնտռենք Իր առաջնորդութիւնը մեր առօրեայ կեանքին մէջ:

Տոն Սթորմըր

«<sup>8</sup>Ամէն երկիր թող Տէրոջմէն վախնայ ու անկէ

դողան աշխարհի բոլոր բնակիչները:

<sup>9</sup>Վասն զի անիկա ըսաւ ու եղաւ:

Ինք հրամայեց ու հաստատուեցաւ:

<sup>10</sup>Տէրը կը ցրուէ հեթանոսներուն խորհուրդները,

փրօժ կը հանէ ժողովուրդներուն դիտաւորութիւնները:

<sup>11</sup>Տէրոջը խորհուրդը յափտեան կը մնայ ու անոր սրտին դիտաւորութիւնները՝ ազգէ մինչեւ ազգ»:

(Սաղմոս 33:8-11)

## Ազատարար ձեռքը

Ճինէլ անունով 30 ամեայ, Թրինիտատէն գաղթած, նշանուած երիտասարդուհի մը կ'աշխատէր Ուորլտ Թրէյտ Սենթրրիֆ երկնապլաց առաջին աշտարակին 64-րդ յարկին վրայ: Սեպտեմբեր 11, 2001թ.-ին ան գործի գնաց ուրախութեամբ, քանի որ Միացեալ Նահանգներ եկած օրէն կեանքը բոլորովին տարբեր էր իրեն համար: Ան ետին ձգած էր իր երկրին սովորութիւնները եւ կը ջանար այս նոր աշխարհին մէջ համակերպուիլ: Թէեւ քրիստոնէայ մեծցած էր, սակայն երբ մայրը քաղցկեղէ մահացաւ 1999թ.-ին, իր հաւատքը խախտեցաւ մինչեւ այդ առեւի իւր անմոռանալի օրը, որ կրակէ կնիքով փորագրուեցաւ պատմութեան էջերուն մէջ:

Այդ պայծառ առաւօտուն, Ճինէլ իր գրասենեակին մէջ մինչ կը խօսակցէր ընկերուիիին հետ, յանկարծ առեւի զօրաւոր պայթիւն մը լրսուեցաւ վերէն եւ ամբողջ շէնքը ցնցուեցաւ: Նախ կարծեցին թէ երկրաշարժ էր, բայց ետքը իմացան թէ ահաբեկչական յարձակում մըն էր: Շատերը լեղապատառ փախան, բայց Ճինէլ, քանի մը ուրիշներու հետ, սպասեց մինչեւ որ երկրորդ պայթիւնը լսուեցաւ: Այն ատեն բոլորն ալ սարսափահար սկսան 64-րդ յարկէն վար իջնել: Անգամ մըն ալ խլացուցիչ ձայն մը ցնցեց բոլորը եւ Ճինէլ երեսին վրայ գետին ինկաւ: Փոշի, քար, երկաթ եւ ասպակի կը տեղար մութին մէջ ամէն կողմէն: Քիչ ետք կայծակի արագութեամբ, այդ որոտումի նման առեւի ձայնը, վախազդու, տարօրինակ լռութեամբ փոխարինուեցաւ:

Ճինէլ կը շնչէր, բայց անկարող էր շարժելու: Փորձեց ելլել, սակայն անկարելի էր: Ոտքերը թաղուած էին հողակոյտին տակ, իսկ գլուխը գամուած էր երկու մեծ սիւններու միջեւ: «Պէտք է ինքզինքս ազատեմ, թէ չէ պիտի մեռնիմ», ըսաւ ինքնիքն եւ ամբողջ ոյժով վիզը քաշեց: Մազերը փետտուեցաւ եւ արիւն սկսաւ հոսիլ ճակատէն, բայց գոնէ գլուխը կրնար շարժել: Մութին մէջ, ասպակիներու եւ քարերու տակ բանտարկուած սկսաւ մտածել թէ արդեօք դուրսը ի՞նչ կը պատահէր: Շատ անոյս էր վիճակը: Յանկարծ յիշեց սիրելի մայրը եւ մտածեց, թէ ի՞նչ պիտի ընէր ան այսպիսի պարագային: «Պիտի աղօթէր: Ոչ թէ ամէն բան փորձելէ վերջ, այլ սկիզբէն»: Ուստի աչքերը գոցեց եւ այսպէս աղօ-

թեց. «Տէ՛ր, գիտեմ որ Դուն գոյութիւն ունիս: Թէն միշտ Քեզի վստահած չեմ եւ երբեմն ալ Քեզ այսպանած եմ, բայց հիմա կը խնդրեմ, որ օգնես ինձի»:

Երբ աչքերը բացաւ, տեսաւ լոյսի բարակ նշոյլ մը, որ զինք շրջապատող փլատակներուն մէջէն կը փայլէր: Յերեկ ըլլալու է, մտածեց, սակայն ոչ մէկ ձայն կը լսուէր: Կամաց-կամաց լոյսի շողը մարեցաւ: «Տէ՛ր, քովս կեցիր» խնդրեց ու շարունակեց խօսիլ Աստուծոյ հետ մինչեւ որ քունի անցաւ: Երբ արթնցաւ, լոյսի շողը զինք դիմաւորեց: Դիմէլ գիտցաւ, որ նոր օր մը սկսած էր: «Տէ՛ր, առանց հրաշքի անկարելի է, որ հոսկէ ազատիմ: Բայց Քեզ գտայ եւ այդ մեծագոյն հրաշքն է ինձի համար: Քու կամքդ թող ըլլայ», ըսաւ վստահութեամբ: Այդ վայրկեանին ձայն մը լսեց վերէն: «Հէլլօ», պոռաց խռպոտ ձայնով: «Մէկը կա՞յ վարը», հարցուց վերջինը: «Այո՛, բայց ոտքերս բռնուած են, չեմ կրնար շարժիլ», պատասխանեց երիտասարդ աղջիկը: Ապա ուրիշ ձայներ լսուեցան: Դիմէլ ձեռքը երկնցուց դէպի այդ լոյսը, որ ճեղքէն կը ցոլար եւ զօրաւոր ձեռք մը բռնեց իր տկար մատները: «Սի՛ վախճար, ըսաւ ձայնը վերէն, անունս Փօլ է: Համբերէ՛, քեզ հոսկէ դուրս պիտի հանեն»:

Փօլ շարունակեց խօսիլ Դիմէլի հետ մինչ ազատարար խումբ մը կը ջանար փլատակները մէկդի ընել: Ամէն անգամ, որ խեղճ աղջիկը կը սրողդէր, Փօլ իր ձեռքը ամուր կը սեղմէր եւ վիրատրին սիրտը խաղաղութեամբ կը լեցուէր: Քիչ ետք, դժուարութեամբ ազատեցին Դիմէլը հսկայ քարակոյտերուն տակէն, ուր թաղուած էր 27 ժամ: Ան վերջին անձն էր, որ ողջ գտնուեցաւ այս վիթխարի փլատակներուն տակէն:

Շաբաթներով Դիմէլ հիւանդանոց մնաց, քոյրերը եւ նշանածը միշտ իր քովն էին: Մէկ բան յստակ էր մտքին մէջ, թէ երբ նեղութեան ժամանակ Տէրը կանչեց, Ան պատասխանեց իրեն, նախ Իր լուսոյ ներկայութեամբ եւ ապա Փօլին միջոցով:

Դիմէլի գործակիցներէն շատերը մեռան այդ օրը: Դիմէլ երախտագիտութեամբ ըսաւ. «Ուրիշ հազարատրներու կողքին ես ալ մեռած կրնայի ըլլալ, սակայն Փօլը ազատեց զիս»: Ան ուզեց անձամբ շնորհակալութիւն յայտնել իր ազատարարին: Երբ զինք ազատագրող խումբը հիւանդանոց եկաւ այցելութեան, հարցուց թէ ո՞ր է Փօլը: Մարդիկը իրարու նայեցան եւ ըսին, որ Փօլ անունով մէկը չկար իրենց հետ:



Ճինել զարմացաւ եւ սկսաւ մտածել, թէ արդեօք երա՞զ էր տեսածը: Սակայն ո՛չ: Ան ստոյգ զիտէր թէ երազ չէր, քանի որ Փօլին ձեռքին ուժեղ սեղմումը զգացած էր եւ հասկցաւ թէ, այդ Աստուծոյ հպումն էր: Եւ Սեպտեմբեր 11-էն ի վեր այդ ձեռքը երբեք զինք չէ ձգած:

«Տէրը բարի է Իրեն ապաւինողներուն ու զինք փնտռող հոգիին: Տիրոջ փրկութեան սպասելը ու լռութեամբ յուսալը աղէկ է» (Ռոբ Երեմիա 3:25-26):

Քարուած՝ «Օրհնաբեր նոնենին» գրքէն

## Փորձութիւնները մեր կեանքին մէջ

### Յակոբոս 1

**Մ**եր հասարակութեան մէջ ընդունուած առասպել մը կայ. երկարա-կեցութիւնը անխուսափելիօրէն մեզ կը դարձնէ բարի, իմաստուն ու հասուն: Երկար տարիներով քրիստոնէայ ըլլալը մեզ հասուն քրիստոնէայ կը դարձնէ: Իսկ ի՞նչ է ձեր կարծիքը, արդեօք այս պնդումները ճիշտ են: Յակոբոսն իր այս նամակը գրեց խումբ մը մարդկանց, ովքեր որոշ ժամանակով քրիստոնէայ էին, բայց դեռ հասուն չէին:

Հասունութեան առաջին նշաններէն մէկն այն է, թէ ինչպէս կը գնահատենք մեր կեանքին մէջ տեղի ունեցած բաները, յատկապէս այն իրադարձութիւնները, որոնք մեզ ինչ-որ տեսակի ցաւ կը պատճառեն: Ասիկա յատկապէս կը վերաբերի այն քրիստոնէաներուն, որոնց Յակոբոսը կը գրէր, քանի որ անոնք իրենց մաշկին վրայ սկսած էին զգալ Հռոմէական Ներոն, Վեսպասիանոս եւ Տոմիդիանոս կայսրերի օրօք հալածանքներու սարսափները: Բայց մենք բռնի հալածանքներ կրելու կարիք չունենք, որպէսզի հասկնանք Յակոբոսի խօսքերը:

«Երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք» (հմր 2): Մենք նոյնպէս ընդգրկուած ենք այստեղ: Համարը կ'ըսէ, երբ ամէն անգամ կը բախուիք բազմազան փորձութիւններու: «Երբ» բառն օգտագործելով Յակոբոսը կարծես թէ կ'ուզէ ըսել մեզի, որ փորձութիւններ ակնկա-

լենք: Ան չ'ըսէր. «Եթէ փորձութիւններ դիմագրատող այն դժբախտ խումբին մէջ էք»: Ո՛չ: Իր ըսածը ատելի շատ նման է հետեւեալին. «Երբ փորձուելու ձեր հերթը գայ»: Մեզի համար դժուար է այս փաստն ընդունելը: Այն մեզմէ հոգեւոր հասունութիւն կը պահանջէ: Կան մարդիկ, ովքեր յոյս ունին, որ պիտի կարողանան կեանքն ապրիլ առանց լուրջ փորձութիւններ դիմագրուելու: Անոնք կը խորհին, թէ Աստուծոյ հնազանդելը եւ ճիշտ բաներ ընելը իրենց գերծ պիտի պահէ այս իրականութիւնէն:

Հետաքրքիր է տեսնել մարդկանց արձագանքը, երբ ընտանիքը ճրգնաժամի միջով կ'անցնի: Գուցէ զաւակները ապստամբած են Աստուծոյ դէմ կամ հիւանդութիւն կամ կորուստ եղած է տան մէջ: Որքա՞ն յաճախ կը լսենք մարդիկ կը հարցնեն. «Ո՞րն էր իմ սխալս»: Արդեօք գիտէ՞ք, թէ ինչ կայ թաքնուած այդ հարցին մէջ: Այնտեղ թաքնուած է այն միտքը, որ եթէ ճիշտ կեանքով ապրեն, ապա ոչ մէկ սխալ չի պատահիր: Եթէ կարողանան գտնել սխալի պատճառը, ապա խուսափելով այդ պատճառէն պիտի կարողանան կանխել այն, որպէսզի կրկին չպատահի իրենց:

Շատ վատ բաներ կը պատահին շատ լաւ մարդկանց հետ: Յոր գիրքը գրուած է ասիկա ցոյց տալու համար: Յորը լաւ մարդ էր, բայց իր կեանքին մէջ ամէն բան սխալ ընթացաւ: Հասունութիւն կը նշանակէ գիտակցիլ, որ մենք անկատար մարդիկ ենք, որոնք կ'ապրին անկատար աշխարհի մէջ, ուստի պէտք չէ շատ զարմանալ, երբ ամէն ինչ սկսի սխալ ընթանալ: Այս իրողութեան հանդէպ ճիշտ կեցուածք ունենալը կարեկից կը դարձնէ ձեզ այն մարդկանց հանդէպ, ովքեր փորձութիւններու միջով կ'անցնին: Անոնց մեղադրելու պատճառներ մի՛ փնտռէք: Այն նաեւ կը պատրաստէ ձեզ՝ ձեր փորձութիւններու ժամանակ պատրաստ գտնուելու: Փորձութիւնները չեն պատահիր միայն խումբ մը դժբախտ մարդկանց, ովքեր բաւականին ճկուն չեն կեանքի դժուարութիւնները դիմագրուելու մէջ: Երբ ամէն ինչ սխալ կը սկսի ընթանալ, ուրեմն այդ բնական է: Այս ամէնը հասկնալը հասունութեան նշան է:

Փորձութիւնները բոլորիս կը պատահին: Տառապանքը ատելին է, քան պարզապէս լուծելիք խնդիր մը: Մեզմէ շատերու համար փորձութիւններն ու տառապանքները նման են կօշիկին մէջ յայտնուած քարի մը:

Ի՞նչ կ'ընէք այդ ժամանակ: Ինչպէս որեւէ խնդիր, դուք կը լուծէք այն: Դուք կանգ կ'առնէք, ձեր կօշիկէն կը հանէք այդ քարը, ապա կը շարունակէք ձեր ճամբան: Սա է այն ձերը, որով կը փորձենք դիտարկել մեր փորձութիւններն ու դժուարութիւնները: Կամ կը լուծէք այն ու կը շարունակէք ձեր կեանքը, կամ՝ ոչ: Տառապելու ժամանակ մենք կ'ուզենք լուծել հարցը, եւ ասիկա ճիշտ է եւ պէտք է փորձենք այդպէս ընել: Մեր առաջին հարցը միշտ հետեւեալն է. «Ինչպէ՞ս կրնամ լուծել այս խնդիրը կամ խուսափիլ այս ցաւէն»: Նոյնիսկ Քրիստոսը այդ խնդրեց Գեթեմանիին մէջ: Բայց ոչ բոլոր խնդիրները լուծելի են: Հասուն մարդը կը գիտակցի սա:

Աստուած կ'ուզէ շատ աւելի լաւ հարցի մասին խորհրդածենք. «Ինչպէ՞ս կրնայ այս փորձութիւնը մեզ Աստուծոյ աւելի մօտեցնել»: Փորձութեան ընթացքին այս հարցը տալով դուք կը սկսիք դէպի հասունութիւն նկատելի քայլեր կատարել: Առանց այս հեռանկարի, 2-րդ եւ 3-րդ համարները շատ տարօրինակ կը թուան, այնպէս չէ՞: «Բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք»: Ուրախութի՞ւն: Երբ դաշտին մէջ հովիւները լսեցին, թէ ինչպէս հրեշտակները կը երգէին Քրիստոսի ծնունդը, անոնք ուրախացան: Ես ասիկա կրնամ հասկանալ: Բայց Յակոբոսի գրածը տարօրինակ կը թուայ: Արդեօ՞ք նկատի ունիք, որ պէտք է այդպիսի ուրախութիւն ունենամ, երբ տառապանքի մէջ կը յայտնուիմ: Տարօրինակ է, բայց այդպէս խորհուրդ կուտայ մեզ Յակոբոսը: Ինչպէ՞ս կարելի է ուրախութիւն ունենալ դժուար իրավիճակներուն մէջ: Քանի որ մենք գիտենք, որ «հաւատքին փորձառութիւնը համբերութիւն կը ներգործէ... որպէս զի կատարեալ ու ամբողջ ըլլաք ու բանի մը պակասութիւն չունենաք» (հմբ 3-4): Դուք աւելի հասուն կը դառնաք, աւելի շատ Քրիստոսանման: Տառապանքը պարզապէս խնդիր մը չէ, որը պէտք է լուծենք: Այն աւելին է: Այն Աստուծոյ ձեռքով նախատեսուած ծրագիր է՝ մեզ վերափոխելու համար:

Այն, ինչի մասին խօսեցինք տառապանքի աստուածաբանութիւնն է: Այն տառապանքի բացատրութիւնն է: Սա հովուական խորհրդատուութիւն չէ անոնց համար, ովքեր տառապանքի մէջ են: Հսկայական տարբերութիւն կայ:

Եթէ հիւանդ մարդու մը խեղճ ընտանիքին այցելէք եւ իրենց խոր

ցալի մէջ ըսէք. «Դուք պէտք է ուրախանաք: Այս փորձութիւնը ձեզի աւելի լաւ մարդ կը դարձնէ», ապա հաւանաբար անոնք կը ցանկանան հարուածել ձեզ, եւ դուք արժանի էք աստոր: Յաւի մէջ եղող մարդկանց աստուածաբանութիւն մի՛ սորվեցուցէք: Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը, երբ կը տեսնէք մէկու մը, ով լաց ու ցաւ ունի: Անոնց հետ լացէք (Հռովմ. 12:15): Սի՛ ըսէք, թէ այդ պահին ինչպէս պէտք է զգան, սիրով կարեկցութիւն յայտնէք:

Ի՞նչ պէտք է ընէ փորձութեան մէջ գտնուող քրիստոնէական: Յակոբոսը կ'ըսէ, որ մեզ իմաստութիւն պէտք է: Իմաստութիւնը դժուար ժամանակներու փոխարինողը չէ: Այդ այն է, ինչ Աստուած կուտայ մեզ դժուար ժամանակներուն մէջ:

«Երանելի է այն մարդը, որ փորձութեան կը համբերէ: Վասն զի եթէ փորձուելով ընտիր գտնուի, կենաց պսակը պիտի առնէ...» (հմբ 12): Օրհնուած ու երջանիկ է, հոգեւորապէս բարեկեցիկ ու նախանձելի է այն մարդը, ով կը յարատեւէ ու կը ստանայ կեանքի պսակը: Այս համարը կը սորվեցնէ մեզ Աստուծոյ ճոխ ու անսահման առատաձեռնութեան մասին: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ յալիտենական կեանքը ձրի պարգեւ է: Երբ ստացանք կեանքի այդ պարգեւը եւ ապրեցինք իրմով, ապա մեզ տրուեցաւ կեանքի պսակը: Աստուած մեզի պարգեւ կուտայ եւ այնուհետեւ կը վարձատրէ մեզ այն բանի համար, թէ ինչպէս ստացանք այն:

Փորձութիւններն անիմաստ ու ապարդիւն չեն: Մեր կեանքի պատմութիւնը, նոյնիսկ եթէ այն տխուր ու ցաւոտ է, իսկապէս Աստուծոյ շատ աւելի մեծ պատմութեան ենթապատկերն է, որն ունի երջանիկ աւարտ, եւ որը յաճախ դժուար է տեսնել մեր արցունքներու միջով: Յակոբոսը կ'ըսէ, թէ մենք գիտենք, որ հոգեւորապէս հասունանալու ճանապարհին ենք նոյնիսկ եթէ այդ փառքի ճառագայթներէն մի քանիսը միայն կը տեսնենք մեր կեանքի սովորական իրադարձութիւններուն մէջ: Քանզի Աստուած մեզ դէպի փառք կը տանի:

Ռէքս Տիրլալ



## Ապաշխարութիւն

«Ինչպէս վախնալով բնաւ ետ չկեցայ օգտակար բաներ ձեզի ըսելէ ու ձեզի՝ հրապարակաւ եւ տան մէջ՝ սորվեցնելէ. վկայութիւն տալով Հրեաններուն եւ Յոյներուն առջեւ՝ դէպի Աստուած ապաշխարութեան համար, մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայ եղած հաւատքին համար» (Գործք 20:20-21):

Պօղոսը յաճախ մի քանի բառով կ'ամփոփէ մեծ ու կարեւոր ճշմարտութիւններ: Դասական օրինակ է Եփեսոսի երէցներուն ուղղած իր հրաժեշտի խօսքը:

Պօղոսի առաքելական պատգամի առաջին մասը «Դէպի Աստուած ապաշխարութեան համար» արտայայտութիւնն է, իսկ երկրորդը՝ «Մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայ եղած հաւատքին համար»: Բաւականին պարզ է, բայց եւ այնպէս՝ հիանալի ու խորիմաստ:

Դարեր շարունակ քրիստոնէական պատգամը այս ու այն կողմ քաշուած է, երբեմն խիստ չափազանցուած, երբեմն գրեթէ աշխարհին մօտ: Որոշ երկիրներու մէջ քրիստոնէական մշակոյթ ձեւաւորուած է եւ ամբողջ բնակչութիւնը կը դիտարկուի որպէս քրիստոնէայ ժողովուրդ, բայց ճշմարիտ ու հաւատարիմ հաւատացեալները դաժանօրէն կը հալածուին: Այսօր մեզ կը հրամցնեն «բարգաւաճման Աւետարան» գաղափարախօսութիւնը, որտեղ Աստուած կը դիտարկուի, որպէս օգտակար գործիք հարստութեան եւ յարմարաւետութեան հասնելու համար: Ոմանք կը փորձեն քրիստոնէային յատուկ «հոգեւոր շապիկ» հագնիլ եւ Աւետարանի պատգամը փոխանցել առանց որևէ մէկուն նեղացնելու կամ արդի աշխարհիկ մտածելակերպը ու ներկայիս մշակոյթային նորաձեւութիւնը յանդիմանելու:

Բայց եկեղեցիներուն մէջ շատ մարդիկ պարզապէս չեն գիտեր թէ ինչ է Աւետարանը: Անոնք Աստուածաշունչի մասին որոշ գիտելիքներ ունին, ծանօթ են անոր մէջ նկարագրուած իրադարձութիւններուն, բայց ինձի կը թուայ թէ անոնցմէ շատերը հեռու են Աստուածաշնչային կեանքէն: Չնայած կ'ըսեն, թէ կը հաւատան Աստուծոյ Խօսքին, սակայն իրենց կեանքին մէջ ոչ մէկ փոփոխութիւն չկայ, զգացում կամ նախան-

ձախնդրութիւն չկայ: Իրենց համար Աստուածաշունչին համաձայն կեանքն ապրիլը մեծ նշանակութիւն չունի:

Պօղոսի պատգամը սկսաւ ապաշխարութեան կոչով. այն շատ ատելի է, քան փոքրիկ աղօթք կարդալը, որը կը սկսի հետեւեալ խօսքով. «Սիրելի՛ Աստուած, ես գիտեմ, որ մեղաւոր եմ...»: Ապաշխարել կը նշանակէ դարձի գալ, դառնալ մեղքէն ու դառնալ դէպի Փրկիչը: Մենք գուցէ դարձի գալու պահին ամբողջութեամբ չհասկնանք ապաշխարութեան իմաստն ու ծաւալը, սակայն ապաշխարութիւնը այդքանով չի աւարտիր, այն կը սկսի ու կը շարունակուի մեր մնացած կեանքին ընթացքին:

Ապաշխարութիւնը ափսոսանք կամ հիասթափութիւն չէ, թէ իբր մենք ատելի լաւը չենք, քան յոյս ունէինք որ կ'ըլլանք, կամ կը կարծէինք, թէ ենք: Ապաշխարութիւն կը նշանակէ գիտակցիլ և ընդունիլ մեր հպարտ բնութիւնը եւ Աստուծոյ դէմ կանխամտածուած ապստամբութիւնը, որը կ'արտացոլուի մեր գործած մեղքերով: Այնուհետեւ կը գիտակցինք, որ մենք մեղք կը գործենք, քանի որ մեղաւոր ենք, եւ որ Աստուծմէ մեր բաժանումը ոչ միայն մեր ըրածի, այլեւ մեր ով ըլլալու պատճառով է: Ասիկա ցաւալի, բայց անհրաժեշտ գիտակցութիւն է: Ապաշխարութեամբ մենք ոչ միայն կը հրաժարուինք մեր կատարած չար գործերէն, այլեւ՝ այն ամէնէն ինչը, ըստ էութեան, մեր էութեան մէջ կը բնակի:

Ասիկա կարող է բաւականին ծայրայեղական թուալ, բայց Տէր Յիսուսը ճիշտ ասոր համար մահացաւ: Ան Իր կեանքը տուաւ մեր մեղքերու պատճառով, բայց ոչ միայն մեր մեղքերու համար: Աստուծոյ շնորհքով եւ Իր ներգործութեամբ մենք միաւորուած ենք Քրիստոսի հետ՝ Անոր մահուան եւ յարութեան մէջ, որպէսզի կարողանանք սորվիլ «կեանքի նորոգութեան» մէջ քայլել (Հռովմ. 6:3-4): Ասիկա կատարեալ եւ ամբողջական փրկութիւն է:

Ճշմարիտ ապաշխարութիւն չունեցողը սրտով ու մտքով կապուած չէ Տէրոջ հետ: Անոնց հաւատքը, եթէ կարելի է այդպէս կոչել, ոչ այլ ինչ է, քան զբաղմունք կամ ինչ-որ ընկերային ներգրառուածութիւն: Անոնք Տէր Յիսուսի աշակերտները չեն, եւ, ցաւօք սրտի, ամէնեւին քրիստոնէայ չեն:

Պօղոսի պատգամն է. «Դէպի Աստուած ապաշխարութեան համար,

մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայ եղած հաւատքին համար»: Տէր Յիսուսին հաւատալով կատարեալ ներում եւ յախտենական կեանք կը գտնենք: Այս կեանքին մէջ մենք պէտք է շարունակենք ապաշխարել եւ հաւատալ մինչեւ այն օրը, երբ դէմ առ դէմ պիտի հանդիպենք Իրեն, ով մեզ մեծ ու անսահման սիրով սիրեց:

Նէյլ Պուքման

## Աշխատանքը դաշտին մէջ

**Կ**արիքաւորներուն ծառայելն ու անոնց ցաւին ու տառապանքին հաղորդ ըլլալը հեշտ չէ, եթէ մեր կոչումը Տէրոջմէն չ'ըլլար:

Տէրոջը շնորհակալութիւն կը յայտնենք մեր նուիրուած աշխատակիցներու համար: Մենք լիովին կը հասկնանք անոնց վիճակները եւ կ'աղօթենք անոնց համար եւ ամէն օր կը քաջալերենք իրենց՝ միեւնոյն ժամանակ անոնց խորհուրդ տալով:

Անոնք ամիսը մէկ կամ երկու անգամ կ'այցելեն մեր բոլոր կարիքաւոր ընտանիքներուն՝ աջակցութիւն եւ սնունդ բաժնելով, խորհուրդ տալով, աղօթելով ու խրախուսելով անոնց Քրիստոսի մէջ:

Անոնցմէ ոմանք կը միանան մեզ «Zoom» ծրագրով, երբ իրենց համար յատուկ հանդիպումներ կը պատրաստենք: Մենք անոնց նաեւ կ'ապահովենք սուրբգրային ամէնօրեայ խորհրդածութիւններ հայերէն լեզուով:

Անոնց ընդհանուր կարիքը ոչ միայն նիւթականն է կամ սնունդը, դեղորայքի կարիքը կը գլխաւորէ ցանկը՝ մեր վրայ դնելով նիւթական մեծ բեռ: Միւս կարիքներն են հիւանդանոցային ծառայութիւնները, տնային խնամքը, ընտանիքներու խորհրդատուութիւնը, ինչպէս նաեւ ըմբոստ պատանիներու եւ զաւակներու խնամակալութիւնը:

16 տարեկան դեռահասները կ'ամուսնանան, որպէսզի ծնողքը ազատ մնայ զաւակ մեծցնելու նիւթական բեռէն: Բարձրագոյն կրթութեան վճարը եւս լուրջ կարիք է:

Բենիկն ու Կայանէն ամուսնացած են եւ զաւակներ չունին, կ'ապրին

հին բնակելի շենքի 3-րդ յարկի վրայ: Կայանեն հրաշալի հաւատացեալ է: Բենիկը կոյր է, Կայանեն ամբողջ օրը իր ամուսինին հոգ կը տանի: Անոր մէկ աչքը նոյնպէս չի գործէր, իսկ միւսը միայն 50%-ով կը տեսնէ: Իր համար այս ամէնը բաւականին



բարդ է: Քրիստոսով ունեցած իր ուրախութիւնն ու հոգեւոր երգեր երգելու ու Յիսուսի համար բանաստեղծութիւններ արտասանելու ոգեւորութիւնը կը ստիպէ մեզ Տէրոջը աւելի ու աւելի գովաբանել:

Անցեալ շաբթուայ լուրերը լաւ չէին: Բենիկը զանգեց Աշոտին՝ մեր աշխատակցին, որպէսզի տեղեկացնէ, թէ Կայանեն կրկնակի կաթուած ստացած է եւ հիւանդանոցն է՝ մարմնի մէկ կողմէն՝ գլուխէն մինչեւ ոտքի ծայրը անդամալոյժ դարձած, եւ որ նիւթական աջակցութեան կարիք ունէր, որպէսզի հիւանդանոցի ծախսերը հոգար:

Մենք կցած ենք Բենիկի ու Կայանէի լուսանկարը: Կը իրնդրենք աղօթել Բենիկի ապահովութեան համար, քանի որ այժմ ան միայնակ է տունը: Աղօթեցէ՛ք Կայանէի համար, որ Տէրը դիպչի իրեն ու առողջացնէ: Աղօթեցէ՛ք Աշոտի ու Յասմիկի համար, ովքեր կը շարունակեն այցելել իրեն ու քաջալերել զինք Քրիստոսի մէջ: